նորա ցարդ երևին. բայց յելս թ դարուն պայծառացաւ տեղին շինութեամբ և վայելուչ կարգաւ միաբանակեցաց, առաջնորդութեամբ հօր Մաշտոցայ, որ եղեն յետոյ կաթուղիկոս. քանզի մեծահաւատ և այրասէր տիկինն Սիւնեաց Մարիամ'ի յիշատակ առն իւրոյ Գաբուռն Վասակայ և'ի լուսն անդարձի նորուն՝ ուխտիւք խնդրեալ շնորհս եգիտ մտանել'ի կղզին, զի ոչ էր երբեք թոյլ տուեալ կին մարդոյ մտանել յանապատ միանձանցն, և ետ կառուցանել վերակացութեամբ Մաշտոցի յամին 874-80 զեկեղեցին մեծ յանուն սրբոյ Առաքելոյ, որ և կանգուն կայ ցարդ, խաչաձեւ գոլով և առանց սեան կրելով գմբէթ. երկուստեք բեմին աւանդատունս ունելով, որոց հիւսիսայնոյն գուռն արտաքուստ է, զի անտի էին ելք տիկնոջն'ի վերնատունն վասն աղօթից. գրունք եկեղեցւոյն յարևմտից և'ի հարաւոյ միափերթք են յընկուզենի փայտէ, առաջինն շինեալ յամին 1176 որպէս փորագրեալ'ի նմա յիշատակագիրն ցուցանէ, և երկրորդն պէսպէս քանդակաւք գրուագեալ յամին 1557. նորոգեալ է եկեղեցին յամին 1654 յերից հարազատաց Տփխեցեաց: Յեկեղեցւոջս յայսմ յաղօթս կալով երանաշնորհ Հօրս մերոյ Մխիթարայ Աբբայի մինչ սարկաւագն էր յամին 1692, արժանացաւ այցելութեան Տիրամօրն և քաջալերութեան առ'ի նմանէն: Կայ և այլ եկեղեցի յարևմտեան հիւսիսի կողմեկին'ի գիւր տեղւոջ սաքաշէն ձեղուամբ, շինեալ'ի նմին տիկնոջէ և նորոգեալ'ի նոյն հարազատաց յամին 1664, և վերըստին'ի յետնոց յամին 1740: Յարևմտից եկեղեցւոյս է նորաշէն բնակարան միաբանիցն 25 սենեկաք, շինեալ յառաջ քան զամս քսան: Գոն և այլ մատրունք անշուքք. և յարևելեան կողմն առ ծովափին երկու խրճիթք Մաղոցիներ կոչեցեալ, զի անդ ճգներ երանելին Մաշտոց թէպէտ և խրճիթքն նորաշէնք են: Միաբանքն անապատակեացք այժմ 10 կամ 15 ոգիք են, և զնախնեացն խստակրօն վարս անաղարտ բերեն յանձինս, պարապելք'ի պահս և յաղօթս յերկարս: Զուարճալի են բոյսք և պարտեղք կղզւոյն, մանաւանդ ծաղկին կամ շուշանն Մարեմայ կոչեցեալ: Են'ի ծովուն և երկու ժայռք անշնակք. բաղումս անգամ յուզեն սաստիկ ալիք նորա'ի շնչելոյ արևելեան հողմոց, զոր և Սոթայ հողմ կոչեն: Ի կարէմմեան ձմերանի խստաւ պաղի ծովակն, և յայնպիսում ժամանակի ծակեալ ոմանց զառանն և ջափեալ գտին զնորութիւնն ուրեք երբև 70 ոտս, չև հասեալ լարին'ի յատակն:

144. Յարևմտակողման հիւսիսոյ գաւառիս, ԱՐՊԱՌԱՆ վիճակի և'ի հին Աշոցս մինչև ցԲասաղ գետ, նշանաւոր տեղիք են Պաղ-Ապարան'ի գլուխ Բասաղ գետոյ՝ և ինքն Բասաղ կոչեցեալ'ի հնումն, ունի հին եկեղեցի մեծ, և 56 երդ Հայ: — Ապարան միւս որ և Շիրազակ նոյնքան հայ բնակչաք. մերձ'ի սա և'ի Զամբլու գիւղ՝ կան քարաշէն և կրաձոյլ շինուածք հին. գտանին և սրբազան շինուածոց աւերակք առ գեօղուքն Ասպուածընկալ, Թղուպ (որ թուի Թեղենիս), Գարա-փէնիսէ, Տամբլու, Բաբաֆիլի, Արղաֆան, և այլն: Զորոպ, առ որով ձոր գեղեցիկ՝ բրաբիոնի կամ Մարեմայ ծաղկի: Գտանին և բոլք կապարի և պղնձոյ, որպէս կարծի և ոսկւոյ՝ 'ի լերինս կողմանս. յորոց մի է Սոսկէնն 'ի մտից հիւսիսոյ լերինն Արայի, առ որով գեօղ համանուն՝ բնակեալ'ի Հայոց գաղթելոց 'ի Մակուայ:

145. Յարևելից հարաւոյ լերինս և'ի մտից հրազդանայ'ի Տարաչիչակ վիճակի, որ է ԾԱՂԿՈՒՆԻՔ կամ ՎԱՐԱԾԵՆՈՒՆԻՔ գաւառ, նշանաւոր տեղիք են, ԿԷԼՈՒՍ կամ ԿԷԼՈՒՍՈՅ վանք յաջմէ գետոյն'ի ստորոտս Աւիպէի-թաս լերին'ի մուտս գեղեցիկ հովտի'ի բարձու 5500', ուր'ի հնումն էր ԿԵՁՐՈՐ քաղաքաւան. շինեալ յԱվիրատայ Պահլաւունոյ և'ի Գրիգորէ Մագիստրոսէ յամին 1031-3. վեց եկեղեցիք են'ի նմա, մեծագոյնն հրաշակառոյց անսիւն գմբեթաւ՝ որ անկաւ'ի սաստնութենէ յամին 1827. կայ'ի նմա և արձանագիր յիշատակի պատուոյ Մագիստրոսին յամին 1051. և նորոգողաց և ընդարձակողաց վանացն'ի սկիզբն ԺԳ դարու՝ յայլ եկեղեցիս. մնացատանին սակաւ ինչ հետք մնան: Վասն գեղոյ վայրացս՝ աստ օթագային բնակիչք Երևանու յամարան: Մերձ'ի կեչառուս կան մնացուածք և Մաքրավանից առ համանուն գիւղիս և այլոյ Մենասպանի: — Ի մտից հարաւոյ սոցա յանկեան վտակի օժանդակի Հրազդանայ կայ ԲՂԻՒ գիւղ, առ աւերակաւք հնոյն՝ ԲՐԶՆԻ կոչեցելոյ ամուր աւանի, որոյ մնան մասն բերդին'ի բարձու սարահարթի, առ որոյ ստորոտով կանգուն կայ հոյակապ սաճար անսիւն գմբեթաւոր շինեալ'ի Գրիգորէ Մագիստրոսէ (որոյ կալուած էր ԲՂՆի) յամին 1031, յորում Սմբատ արքայ (Յովհաննէս) և Պետրոս կաթողիկոս Գետադարձն՝ հաստատեցին եպիսկոպոս'ի ԲՂՆի, որոյ բընակարանին մնան նշխարք: Ի ԺԴ և'ի ԺԵ դարս ասպատակ Թաթարաց աւերեաց զտեղիս: Բնակիչք գեղջն 40 տուն մահմետական և 30 տուն Հայ: Առ ԲՂՆեաւ կամուրջ փայտաշէն արկեալ կայ'ի վերայ Հրազդանայ: — Ի հիւսիսոյ ԲՂՆոյ կայ Սօլաղ գիւղ, և առ նովաւ աւերակ Մայրոյ վանայ կամ Մայրագոմայ, ուր եկաց Յովհաննէս հակառակողն Եղբի:

146. Յելից Հրազդանայ'ի հիւսիսային արևմտեան կողման ծովուն, 'ի ՆԻԳ և'ի ՄԱՔԱՔԱՋ գաւառս նշանաւոր տեղիք են, Ձիպոտլու գեօղ որ է ՃԱՊԱՔԻՆ ըստ Հայոց, 'ի հիւսիսային արևելեան ծայր ծովուն'ի սահմանագլուխ գաւառիս և Գանձակայ, 'ի ստորոտս լեռնանցից Իշխկմէյանայ, 130 տամբք Հայոց եկելոց 'ի Պայէզնայ: — Պորպաղ կամ Օրպաղու-յարևմտեան հիւսիսային ծայր ծովուն, Թուի Բեբրեկոց գիւղն, 60 հայ տամբք և աւերակաւք: — Ծուղնանիկ մերձ'ի Պորպակ: — Ռընգամաղ յահեկում Հրազդանայ մերձ'ի խառնուրդս առուին Սևանայ'ի գետն, հանդէպ կեչառուսայ, 100 հայ տամբք: Ի հարաւոյ նորա Ակոռ գեօղք երկու 120 տամբք Հայոց: Ընդ մէջ սոցա և ծովուն կայ Պուղա-Ռեխիի լեռան: — Ալաֆարս որ թուի Ալաբէրդոյ գիւղ, 'ի հարաւոյ վերնոյդ և'ի հիւսիսոյ Քեսեթանկ լերին, 40 տամբք: — Դարձեալ յելք ծովուն Ցամաքաբերդ, Գոմայր, Դրմաշէն, և այլն. ընդ որս և հայր Յովհան վանք և Անրի վանք? աւերակ յելք ծովուն: